



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



S S FEB 2013

1063

22 FEB 2013

610
20-ԱՐ
394

ԲԺԿ. ՎԱՀԱՆ ԱՐՄՐՈՒԻՆԻ

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՑՆԵՐ ՆԵ 3

30 III 2010

616.9
Վ-88


ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴԱԻԹԻԻՆՆԵՐԸ

Եկ

Ն Բ Ա Ն Ց Թ Ա Յ Ն Ը

(Պ'նչ ասել է վարակուել.—Վարակման պահառներն
ու եղանակները.—Վարակումից պահպանուելու
միջոցները):

ՊԱՏԱՆԻՐԱԳՅԱՐԴ



Նկ. 15.



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարտություն Վրաց Հրատ. Ընկ. ||| Տիպոգրաֆիա Груз. Изд. Т-ва
1902

Дозволено цензурю. Тифлисъ, 3 декабря 1901 г.

Ներկայ գրքովի մէջ մենք աշխատել ենք
ժողովրդականացնել վարական գա-
ղափարը:

Մենք ցոյց ենք տուել, թէ ի՞նչ է վարա-
կը, բացատրել ենք վարակման պատճառ-
ները, վարակուելու եղանակը և ինքնա-
պահպանութեան միջոցները:

Յակացել ենք, որ գիրքը մատչելի լինի
ամեն կարգի ընթերցողի, որքան թոյլ է սա-
լիս նիւթի ընդարձակութիւնը, նրա բարդու-
թիւնն ու գիտնականութիւնը:

Եւ այդ մի դժուար գործ է:
Ժողովրդականացնելու դժուարութիւնն
է, անտարակոյս, պատճառը, որ օսար գրա-
կանութեան մէջ մեզ չյաջողուեց մի հան-
րամատչելի լիակատար ձեռնարկ գտնել այս
նիւթին վերաբերեալ:

Պարզութեան համար գրքովիս մէջ զե-
տեղի ենք մի շարք նկարներ:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, այս
գրքովի պարունակում է իր մէջ մի ընդհա-
նուր հայեաց վարակի վրա:

Մեր նետեալ գրեոյկներում մանրամասն
կերպով կը խօսենի վարակիչ հիւանդու-
թիւնների մասին մի առ մի, եւ յանախ
մատնացոյց կ'անենի ներկայ գրքի վրա:

Ուրեմն այս զիրքը մի սեսակ
առաջաբան է մի շարք բրոսիւր-
ների համար, որ մտադիր են ի
նուիրել վարակիչ հիւանդու-
թիւններին:

Բ.Ճ.Պ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Փետրվար 1902 թ.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ա.

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Երբ մէկը վայր է ընկում ու սուր կոտ-
րում, կամ մրսում է ու քամի ստանում,
կամ թէ չէ վնասակար բան է ուտում ու
փորացաւ ընկնում,—դրանից ուրիշներին
վնաս չի հասնի. հիւանդը կը հիւանդանայ,
խոկ առողջները նրա ցաւից չեն ընկնի (չեն
վարակուի), առողջ կը մնան:

Բայց Աստուած չանի, եթէ տան մէջ
մէկը խօլերա, ժանտախտ, դիֆլերիտ կամ
քութէշ ընկնի, միւս տնեցիք էլ կը կպչն
(այսինքն կը վարակուեն) այդ հիւանդից ու
իրանք էլ կը հիւանդանան:

Այս տեսակ հիւանդութիւնները, (որոնք
հիւանդից փոխվում են առողջներին), կոչ-
վում են վարակիչ հիւանդութիւններ: Մեր
ժողովուրդը վարակիչ հիւանդութիւններին
ուրիշ զանազան անուններ էլ է տալիս. օրէ-
նակ—կպչողական, փոխուող, փոխանցնող:

Ամենից լաւը վարակիչ բառն է.—մենք էլ
միշտ այդ բառը գործ կ'ածենք:

Վարակիչ հիւանդութիւնները բաւա-
կան շատ են:

ԳԼԽԱԿՈՐՆԵՐԸ սրանք են.

1. Խօլերա
2. Ժանտախս
3. Խնֆլուէնցա
4. Տիֆ
5. Դիքրերիս, Մաշկախս կամ Բզացաւ
6. Քուրքէ, Կարմրախս կամ Սկարլա-
շինաւ
7. Ծաղիկ
8. Ջրծաղիկ
9. Կարմրուկ
10. Կապոյժ հազ կամ Կոկիւշ
11. Թոքախս:

Աւելացնենք և 12. Վեներական հիւան-
դութիւնները (վատ ցաւ, սուսունակ, կակուղ
շանկը):

Այս բոլոր ցաւերն էլ ամեն հասակի
մարդկանց կարող են դիպչել (երեխաներից
սկսած մինչև ծերերը), իսկ նրանցից միքա-
նիսը դիմաւորապէս մանուկների ու պատա-

տանիների հիւանդութիւններ են: Այս պատ-
ճառով էլ դրանք կոչվում են մանկական վա-
րակիչ հիւանդութիւններ: Սրանք են. 1) Դիփ-
թերիտը, 2) Քութէշը, 3) Ծաղիկը, 4) Ջըր-
ծաղիկը, 5) Կարմրուկը, 6) Կապոյժ հաղը:

Իսկ սրանցից ամենավտանգաւորներն են.
Դիփթերիտը, Քութէշն ու Ծաղիկը: Այդ երեքը
մեր խիզճ մանուկների դահիճներն են:
Ինչ սարսափելի կոտորածներ են ա-
նում դրանք:

Շաբաթ չի անցնի, որ մեր քաղաքնե-
րում ու գիւղերում չերեսայ երեխաների մէջ
այդ մանկական հիւանդութիւններից մէկն
ու մէկը:

Մի տեղից դրում են.—«տուն չմնաց,
որ մի հիւանդ երեխայ չլինի,» մի ուրիշ
տեղից, թէ «մեռածների թիւը ահագին է»,
մի երրորդից, թէ «առաւօտից մինչև
երեկոյ մանր դաղաղներ են կրում դերեզ-
մանսատուն»:

Մնդութ են այդ սարսափելի ցաւերը:
Մի տեղ որ բուն են դնում, էլ դուրս չեն
գալիս:

Այսպիսով մահը տարէց-տարի հնձում է
մեր մատաղ տունկերը, մեր ապագայ յոյսը.—
մեր զաւակներին:

Քրտինքով ու ծանր աշխատանքով, կէսակուշտ—կէսանօթի, խեղճ գիւղացին հազիւ մննդում-մեծացնում է իր զաւակին, որ նա մեծանայ, վառ պահի իր օջախի կրակը: Եւ յանկարծ մի ու օր քութէշը կամ դիֆթերիաը, ծաղկել կամ տիֆը գալիս են խաւարեցնում նրա արել, կտրում են նրա հերթիկի ծուխը և ամայի դարձնում խեղճ գեղջուկի տունը:

Դոնէ զոհը մէկը լինէր.—«Է՞ն, գնացածը գնաց, Աստուծու կամքն էր, մէկին տարաւ, մնացածներին խղճաց», կ'ասէր խեղճ գիւղացին ու կը միսիթարուէր:

Բայց յաճախ հիւանդութիւնը մի երեխայից միւսին է անցնում, մէկից յետոյ միւսն է պառկում, ու փոքրիկ դադաղները իրար ետևից դուրս են տարվում խրճիթից: Բեթղեհէմի մանուկների կոտորածը ոչինչ է վարակիչ հիւանդութիւնների կոտորածի հետ համեմատած:

Այսքանը գեռ մանուկների հիւանդութիւնների արածն են:

Իսկ հասակաւորներինը:

Ո՞վ չգիտէ, թէ ինչ սարսափելի բաներ են խօլերան կամ ժանտախտը, և ինչ-

քան մարդ են կոտորում նրանք, երբ եւ բեռում են մի երկրում:

Վեց հարիւր տարի առաջ մի ցաւ ընկաւ աշխարհ: Ասում են որ միայն Եւրոպայի մէջ 45 միլիոն մարդ ջարդեց նա: Այդժամանակ ամբողջ Եւրոպայում հազիւ 100 միլիոն մարդ լինէր, ուրեմն այդ ցաւը աղգաբնակութեան համարեա կէսը մեռցրել էր: Այս սարսափելի հիւանդութեան անունը դրել էին «սև ցաւ»:—Դա ժանտախտն էր:

Իսկ խօլերան, իսկ ինֆլուէնցան, իսկ թոքախտը:

Թոքախտը այնքան սարսափ չի գցում ժողովուրդի վրա, ինչպէս խօլերան ու ժանտախտը, բայց նրա կոտորածը աւելի մեծ է:

Բաւական է իմանալ, որ Ռուսաստանում թոքախտից ամեն տարի մեռնում են վեց հարիւր հազար մարդ: Եթէ այս մարդիկն ապրէին, ամեն տարի թիֆլիզի նըման չորս քաղաք կը հիմնէին:

Հաշուած է, որ վեց մեռնողից մէկը թոքախտից է:

Ել չեմ կարող երկար կանդ առնել վարակիչ հիւանդութիւնների հասցրած վնասների վրա: Մի զարմանաք, եթէ ասեմ, որ

մեռնողների կէսը այդ հիւանդութիւններից է!...

Բ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍԿՄՎՈՒՄ ՈՒ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առհասարակ վարակիչ ցաւերը այսպէս են երկում: Գիւղի կամ քաղաքի մէջ հիւանդութիւն չկար, ամեն մարդ իր դործին էր, յանկարծ մի օր լսկում է, թէ այս ինչի տունը ցաւ է ընկել: Տնեցիներից մէկը տաքութիւն ունի, գլուխը ցաւում է, մէջը կոտրատվում, սաստիկ թուլութիւն է վրա եկել ու մարմինը դուրս է տուել: Հիւանդը անհանդիստ է, գիշերը վեր է թռչում ընից, բղաւում է, զառանցում է (գէլն է տալիս), իսկ ցերեկը ախորժակ չունի, սիրտը խառնում է, փախում է ևայն:

Մի երկու-երեք օր չի անցնում ու հիւանդի պահողներից մէկը կամ երկուուր նոյն ցաւով հիւանդանում են: Այսպիսով ամբողջ տունը կարող է նոյն հիւանդութիւնով փարակվել:

Այդ միջոցին հարեան տանը կամ հիւանդի

աղդականների մէջ էլ հիւանդացող է լինում: Եթէ հարցուփորձ անէք, կ'իմանաք, որ կամ այդ տներից հիւանդի տուն եկած են եղել, կամ հիւանդի մօտից մէկը այդ տներն է դնացած եղել ու ցաւը տարել գցել այնտեղ էլ, կամ թէ չէ այնտեղից իրեր են բերել (աման-չաման, տեղաշոր, հագուստ և այլն):

Մի գրքի մէջ այսպիսի մի բան է պատմած:

«Գիւղում գիֆթերիտ (բգացաւ) կար: Կէս վերստի վրա ապրում էր մի անտառապահ. սա գիւղից ոչ ոքի չէր թողնում ներս մտնի իր տունը. վախում էր, չինի թէ հիւանդութիւնը բերեն իր երեխաների մէջ գցեն: Ինքն էլ գիւղը ոտք չէր դնում: Մէկ օր անտառապահն իմանում է, որ իր սանիկն էլ է հիւանդացել գիւղում. շատ ցաւում է ու իր 12 տարեկան Մարիամիկին զրկում է, որ գնայ լուսամտից հարցնի երեխայի առողջութիւնը, իսկ տուն չմտնի: Մի գլխի աղջում էլ ընծայ է զրկում: Աղջիկը գնում է, լուսամուտը թխկթխկացնում: տեղեկանում է հիւանդի մասին և յանձնում է ընծան ու շուտ հեռանում: Ո՞վ կը կարծէր, թէ այս մի բոպէի մէջ լուսամտից երեխան պիտի վարակուեր. բայց արի ու տես, որ

Խեղճ Մարիամիկն էլ բգացաւ ընկաւ ու
մեռաւ»:

Տեսէք, թէ որքան դդոյշ պէտք է լի-
նել:

Մի ուրիշ դէպք էլ ես պատմեմ.
Ամարանոցում ինձ կանչում են մի հի-
ւանդ երեխայի մօտ: Մի սիրուն թմիլիկ
հինգ տարեկան աղջիկ էր, քութէշ (սկար-
լատինա) էր ստացել: Հարցուփորձ արի և
իմացայ, որ ամարանոցում դեռ այդպիսի
հիւանդ չէր եղած: Ոչ որ էլ չդիտէր, թէ
նրանդից է վարակուել խեղճ երեխան:

Բաս որտեղից, հօ երկնքից չիջաւ ցաւը:
Շատ որոնեցի և ահա թէ ինչ իմացայ:
Անցեալ տարի այդ ամարանոցում մի ըն-
տանիք է ապրելիս եղել և երեխաներից
մէկը հիւանդացած է եղել քութէշով ու ա-
ռողջացել: Ծնողները հիւանդի անկողինը,
հագուստեղէնն ու սպիտակեղէնը մասամբ
այլում են, մասամբ էլ եռցնում դեղերով
ու վերադառնում են թիֆլիզ: Նրանք
հեռացել էին, բայց հիւանդութեան թոյնը
մնացել էր ամարանոցի մէջ, և երբ լիզու-
մի ծնողները տեղափոխուել էին այստեղ,
այդ սարսափելի թոյնը կպել էր խեղճ ե-
րեխային ու հիւանդացրել նրան:

Այսպէս ուրեմն վարակիչ հիւանդու-
թիւնները հիւանդից փոխվում են առողջ-
ներին եւ սրանց էլ հիւանդացնում: Այս ձեռվ
երբեմն ցաւը տարածվում է գիւղի կամ քա-
ղաքի մէջ ու շատ զոհեր տանում: Շատ ա-
րագ տարածվում են մանաւանդ երեխաների
հիւանդութիւնները:

Բայց այս գեռ բոլոր չէ: Եթէ մէկը
մտնի այդ գիւղը ու մի հիւանդի հետ յա-
րաբերութիւն ունենայ, կարող է պատահել,
որ երբ վերադառնայ իրանց գիւղը, հետը
կը տանի հիւանդութիւնը ու այստեղի ե-
րեխաների մէջն էլ կը գցի:

Հիմի վերցնենք հակառակը:

Եթէ առողջները ոչ մի յարաբերութիւն
չունենան հիւանդի ու նրա մօսի մարդկանց
հետ, այսինքն ոչ հիւանդի տունը մտնեն, ոչ
այնտեղից մարդ ընդունեն, դրանք առողջ կը
մնան: Եթէ մի առողջ գիւղ բոլորովին
կտրի իր կապը հիւանդ գիւղերի հետ, օրի-
նակ, եթէ ճանապարհները փակի, որ հի-
ւանդ տեղերից ոչ ոք գիւղը չմտնի, այդ
գիւղը աղատ կը մնայ ցաւից, թէկուղ նրա
չորս կողմի գիւղերը բոլորն էլ վարակուած
լինեն:

գ.

Ի՞նչ ՀԱՍԿԱՑԱՆՔ ԱՅՍՔԱՆ ՊԱՏՄԱԾՆԵՐԻՑ

Հասկացանք, որ Վարակիչ (փոխուող կամ կպչող) հիւանդուքիւնները միշտ հիւանդից են անցնում առողջին։

Եթէ մի դիւզում երկում է, օրինակ, տիֆ (փորհարինք), բութէշ, դիֆթերիտ կամ խօլերա և այլն, լաւ փնտռեցէք հիւանդութեան սկիզբը և կը տեսնէք, որ ամենից առաջ հիւանդացել է մէկը, այդ մէկից կը պելեն երկուսը, այս երկուսից ուրիշները, և այսպէս ցաւն ընկել է խեղճ դիւզի և բազաքի մէջ։ Ուրեմն հիւանդի մէջ, նրա սեննակի մէջ, նրա իրեղինների (քաների) մէջ մի բոյն պիտի լինի, որ ընկնում է առողջ մարդու վրա ու սրան էլ բունաւորում։

Այս թոյնի անունը դրել են Վարակիչ Թոյն, կամ կարծօրէն—վարակ։

Մինչև վերջին ժամանակներս բժիշկները չէին հասկանում, թէ ինչ բան է այդ վարակը. բայց այժմ մենք դիտենք։
Հիմի դիտենք, որ բոլոր վարակիչ հիւանդուքիւնների պատճառը զարմանալի

փոքր էակներ են, որոնք հիւանդից դուրս են գալիս ու մտնում առողջ մարդու մարմնի մէջ, այդտեղ անում-բազմանում են ու հիւանդացնում նրան։

Այդ էակները այնքան մանր են, որ աչքով անկարելի է տեսնել, այլ դիտում են նրանց մեծացնող ապակիների միջով։

Նրանց անունը բակտերիա (փայտիկ, ցուպիկ) կամ միկրօբ է (մանր էակ կամ մանրիկ)։

Այս անունները պէտք է միտք պահել, որովհետև մենք շատ անդամ դորձ կ'ածենք այս գրքոյկիս մէջ։

Պէտք է նոյնպէս իմանանք, որ ամեն հիւանդութիւն իր սեփական միկրօբն ունի, դիֆթերիտի միկրօբը միմիայն դիֆթերիտ կարող է առաջացնել, խօլերայինը—խօլերա, տիփինը—տիփ։


Հիմի, տեսնենք թէ ինչ բան է առհասարակ բակտերիան կամ միկրօբը։

Դ.

Ի՞նչ է ԲԱԿՏԵՐԻԱՆ (ՅՈՒՓԻԿ) ԿԱՄ ՄԻԿՐՕԲԸ (ՄԱՆՐԻԿԸ)

Ամենքը տեսած կը լինեն մեծացնող ապակիներ։ Դրանք կո՞ր ապակիներ են, երկու

երեսն էլ գողացած։ Եթէ աչքերիդ դնեք
ու նրա միջով մի փոքրիկ բանի նայեք, այդ
բանը 5—6 անգամ կը մեծանայ (տ. նկ. 1):




Նկ. 1.

Հիմի գիտնականները
այնպիսի ապակիներ են
շինում, որոնց միջով աշ-
ուարկանները ոչ թէ 5—6
անգամ են մեծանում,
այլ աւելի անգամ։

Այդպիսի ապակինե-
րից միքանիոը հագցնում
են խողովակի մէջ և շի-
նում են մեծացնող գոր-
ծիք, որի անունը մանրա-
ցոյց է, այսինքն—մանր
առարկաներ ցոյց տուող։

Ահա մանրացոյցը (նկ.
2):

Տեսնում էք մի երկար
պղնձէ խողովակ։ Խողո-
վակի վրա գրուած է Խ,
այդ խողովակը, ինչպէս
տեսնում էք, հագցրած է
նոյն պէս պղնձէ պատ-
ուանդանի վրա (Պ)։ Պա-
տուանդանը կէսում կազ-



Նկ. 2.

մում է մի սեղանիկ, որի մէջտեղը ծակ է
(Պ), իսկ սեղանիկի տակը մի շարժական
հայելի կայ (Հ):

Գլխաւոր մասը, ի հարկէ, խողովակն է,
որովհետև նրա մէջն են հագցրած մեծա-
ցնող ապակիներից միքանիոը, որ առար-
կաները շատ մեծանան։ Խողովակի տակ,
փոքրիկ սեղանիկի վրա, գրվում է մի կտոր
մարուր ապակի, իսկ սրա վրա կաթեցնում
են, օրինակ, մի կաթիլ ջուր։ Ներքեկի հայելին
այնպէս կարելի է պտըտել, որ ներքեկից էլ
(ծակի միջով) լոյս ընկնի այն կաթիլ ջրի
վրա ու ջուրը լաւ լուսաւորուի թէ ներքեկից
և թէ վերեկից։

Դիտողը խողովակի վերեկի ծակից է
նայում (տ. նկ. 3):


Մանրացոյցը այնքան է մեծացնում
առարկաները, որ ամենաբարակ մազը գե-
րանի հաստութեան է երեսում, նոր սրած
ածելու բերանը սղոցի նման է, իսկ ասեղի
ծէրը—գուլ մեխի։ Եթէ հնար լինէր շանը
մանրացոյցի տակ դնել, նա մի ահագին սար-
կը գառնար, նահնձնի ու գուշի կրու-
տանար, իսկ մինչեւ դուրս բառ մար-
ւար։

7/3/1922
Վ. ԱԿՈՆԻ, ԽՈՆԿԱՆԻ
Ա. ԱՅԱՑ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ *



Բայց այսպիսի խոշոր բաներ չի կարելի, ի հարկէ, մանրացոյցի տակ դնելու նայել։ Դառնանքը ուրեմն մի կաթիլ ջրին։

Ահա թէ ինչեր են երեսում վերևից գիտողի աշքին (տ. նկ. 4)։



Նկ. 4.

Ի՞նչ զարմանալի բան. — ոչինչ չէր երեսում, ջուրը պարզ էր, իսկ հիմի այդ մի կաթիլ ջուրը մի փոքրիկ լճակ է գառել, և այդ լճակի մէջ զարմանալի ձևի էակներ են լողում։ Նրանք լողում են արագ-արագ, պտըտվում են, յատակից վեր բարձրանում ու գարձեալ ընկղմվում։ Միւսները հանդարտ լողում են ու իրանց համար ուտելու բաներ որոնում ու կուլ տալիս։ Այս մի ամբողջ աշխարհ է։ Այս մանր էակները, որ հասա-


բակ աչքով չենք կարող տեսնել, զանազան ձևի են լինում. կլոր, ձուածե, եղջլուրածե, կամ խողովակի նման, մի քանիսը պոչով են և այլն։ Արանք կոչվում են ջրաճճիներ (ա, ա, ա)։

Հիմի մի լաւ նայեցէք նկարին. տեսնում էք այն մանր-մունր կէտերը և թելիկ-ները կամ շարանները, որոնց կողքին դրել ենք (բ, բ, բ) տառերը։

Դրանք փայտիկներ (ցուպիկներ) կամ բակտերիաներ են. այստեղ դրանք խումբ-խումբ են ժողովուած, բայց աւելի լաւ տեսնելու համար, աւելի ևս մեծացնենք այդ բակտերիաները։

Դրա համար մանրացոյցի սեղանիկի վրայից վերցնում ենք ջրի կաթիլով ապակին ու նրա տեղը դնում մի ուրիշ ապակի, որի վրա կաթացնում ենք մի ուրիշ ջրի կաթիւ։

Այժմ ահա թէ ինչ կը տեսնի այդ գիտող մարդը (տ. նկ. 5)։



Նկ. 5.


Խոկոյն աչքի են ընկնում երկար ժապաւ էնիներ ու շարաններ, յետոյ ձախ կողմում երկում են իրար կպած մանր օղակներ, ներսելում—կեռ փայտիկներ ու մանր ոլորներ, որոնք մանր որթերի են նմանում, իսկ վերևում ու աջ կողմում տեսնում ենք մանր գնդիկներ, որոնց մէջ նկատելի են մանր կէտեր։

Գնդիկները կամ ցրուած են լինում

հատ-հատ, կամ գասաւորվում են զոյդ-զոյդ, չօրոշորս, ուժ-ուժ և աւելի թուով ու կազմում են կամնաւոր կապոցներ, կարծես պարաներով կապած ապրանքի հակեր լինեն (տ. նկ. 6, 7, 8) որոնք հաղար և աւելի անդամ մեծացրած են:



նկ. 6.



նկ. 7.



նկ. 8.



նկ. 9.

Ժապաւէններն ու շարանները բաղկացած են նոյնպէս մանր բակտերիաներից, որոնք ամեն վայրկեան կարող են բաժանուել

իրարից, ինչպէս աէրոզորմեայի հատիկները, երբ թելը կտրվում է:

Մանրիկները, ինչպէս գիտենք, միշտ անշարժ չեն մնում, այլ շատերը անդադար շարժման մէջ են: Գնդաձևերը անշարժ են, ցուպիկները մի տեսակ ճօճվում են, իսկ մի քանի տեսակները սաստիկ արագութեամբ շարժումներ են անում:

Սրանք պոչաւոր կամ՝ բարչաբեկ կրողներ են:

Նկար 9-ի վրա տեսնում էք, որ կան միապոչ բակտերիաներ, կան և երկու, երեք և աւելի թելիկ ունեցողներ. այդ թելիկները արագ շարժվում են, կարծես ճեղքում են ջուրը և յետ ու առաջ տանում մանրիկներին:

b

ԻՆՉԻՑ ԵՆ ԲԱՂԿԱՑԱԾ ՄԱՆՐԻԿՆԵՐԸ

Սրանք բոյսիկներ են, բայց զարմանալի մանր բոյսիկներ.—նչ արմատ ունեն, ոչ տերեւ և շարժուն են:

Երբ կոտրում ենք ձուն ու կճպում, կճեպի տակ գտնում ենք մի բարակ սպի-

տակ պարկ կամ շապիկ, որ լցուած է ջրիկ
սպիտակուցով:

Բակտերիան էլ մի տեսակ հեղուկ է,
որ լցուած է չափազանց նուրբ ու թափան-
ցիկ պարկի մէջ։ Միայն, ի հարկէ, որչափ
բակտերիան ձուից փոքր է, այնչափ էլ նրա
պարկը բարակ է սպիտակուցի պարկից։
Տեսէք թէ նրչափ բարակ պիտի լինի դա-
իսկ մանրիկների մեծութիւնը։

Ի՞նչ պիտի լինի մի բանի մեծութիւնը,
որ մարդու աչքի չի երևում և որին տես-
նելու համար պէտք է մեծացնենք նրան
1000—2000 և աւելի անգամ։

Բայց էլի գիտնականները հնար են
դաւել նրանց չափելու։

Մի կաթիլ ջրի մէջ կարող են տեղա-
ւորվել 40 միլիօն (մի միլիօնը—տասը հարիւր
հազար է) բակտերիա, որոնք ազատ կըզգան
իրանց այնտեղ, ինչպէս ձուկը ջրում։ Մի
մատնոցի մէջ կը տեղաւորուեն այնքան բակ-
տերիաներ, որքան մարդ կայ ամբողջ հողա-
գնդի վրա։ Եթէ իրար կողքի շարենք
40 հազար հատ, հազիւ թէ նրանք մի
վերշոկ տեղ բռնեն։

Գիտնականները շատ քրտինք են թա-
փել, շատ գլուխ ցաւացրել այս մանրիկները

դ տնելու, նրանց ձևերն ու տեսակները լաւ
ուսումնասիրելու համար։

Մենք չենք կարող երկար պատմել,
թէ ինչպէս են զանազանվում միմեանցից
բակտերիաները, բայց պէտք է իմանալ, որ
մենք, բժիշկներս, այժմ ճանաչում ենք շատ
վարակիչ հիւանդութիւնների մանրիկներ։

Ճշմարիտ որ, ամեն հիւանդութիւն իր
բակտերիան ունի, այնպէս որ բակտերիան
տեսնելով կարող ենք հասկանալ հիւանդու-
թիւնը։

2

ՈՐՏԵՂ ԵՆ ԱՊՐՈԽՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

Ամեն տեղ։

Օդի, ջրի, հողի, տան, հագուստի,
ուտելիք-խմելիքի, մի խօսքով, ամեն բա-
նի մէջ բիւրաւոր-միլիօնաւոր մանրիկներ
կան։

Նրանք մանում են մեր ստամոքսը կե-
րակրի, ջրի հետ, մեր թոքերը—օդի հետ,
և այլն։

Ահագին բանակութեամբ գտնվում են
նրանք կեղտի, աղքի, սատկած կենդանիների

ու թառամած բոյսերի մէջ. մի խօսքով, ամեն նեխուող ու փառղ նիւթերի մէջ։

Ուրեմն մենք ամեն կողմից շրջապատուած ենք այս անհնչմարելի, անտեսանելի էակներով։ Աստուած տուել է, որ նրանք մեծ մասամբ անվնաս են, թէ չէ աշխարհի երեսին էլ ոչ կենդանի կը մնար և ոչ բոյս։

Է

ՄԱՆՐԻԿՆԵՐԻ ԿԱՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԿԵՍՆՔԸ

—Ի՞նչպէս թէ կեանք. միթէ այդչափ փոքր էակներն էլ կեանք ունեն, կը հարցնէք դուք։

—Այս, դրանք էլ կեանք ունեն, այս ինքն, դրանք էլ սնունդ են առնում, առ լում են, աճում ու բազմանում։

Մի զարմանաք։

Բնութիւնն անտեսանելի էակների մէջ ևս կեանք է դրել։ Բակտերիաները անկենդան բաներ չեն, ինչպէս հողի հատիկը կամ մի կտոր չոփ։

Ընդհակառակը, ով դիտել է այդ էակները մանրացոյցի միջով, նա տեսած կը

լինի, թէ ինչ աշխոյժով ու արագութեամբ շարժվում են նրանք ու բազմանում։

Ամեն էակ, —բոյս թէ կենդանի —կերակրվում է, որ ապրի և բազմանայ։ Ցուպիկներն էլ պէտք ունեն կերակրուելու։

—Ի՞նչպէս թէ կերակրուել, զարմացած կը հարցնի ընթերցողը, —միթէ այդ էակներն էլ, որոնց մենք իսկի չենք էլ տեսնում, կարող են ուտել ու մարսել։ Եւ ի՞նչպէս կարող են բան ուտել ու մարսել, քանի որ ոչ բերան ունեն, ոչ ստամոքս։

—Իսկ ի՞նչպէս են կերակրվում բոյսերը, չէ որ նրանք ևս ոչ բերան ունեն, ոչ ստամոքս։

Բակտերիաներն էլ բոյսիկներ են, նրանք էլ բոյսերի նման ուղղակի ծծում են զանազան նիւթեր։

—Ո՞րտեղ են վերցնում նրանք իրանց կերակուրը։

—Օդից, ջրից, հողից, նրանք ապրում են կենդանիների, բոյսերի ու մարդկանց մարմի վրա, նրանք շատանում են մեր ուտելիքների մէջ։ Ամեն տեղ, ամեն նիւթից նրանք իրանց համար սնունդ են ճարում, ու ամեն ինչ քանդում-աւերում։

—իրանք ի՞նչ են, որ իրանց քանզածաւերածն ինչ լինի, կ'ասէք դուք:

Սրան ես կը պատասխանեմ, որ եթէ մէկի կերածը չնչին բան է, բիւրաւոր միւլիօնները ու միլիարդները կարող են շատ բան խժռել-ոչնչացնել:

Այժմ մենք ուզում ենք հասկացնել ընթերցողին, թէ ինչպէս են նրանք աճումք բազմանում:

Ը

Ի՞նչՊիՄ են ՊՏՂԱՀՈՐՎՈՒՄ ՄԻԿՐՈԲՆԵՐԸ եի
Ի՞նչՊիՄ ԲԱԶՄԱՆՈՒՄ

Երկու կերպ:

Մէկոր—տեսնում ես այդ փայտիկը կիսվում է,—երկու դառնում, յետոյ այս երկուսից ամեն մէկը մեծանում է, հասունանում ու էլի երկու է դառնում, նրանցից իւրաքանչիւրը էլի կիսվում է և այսպէս անվերջ: Ամեն 20 րոպէում կամ կէս ժամում մի փայտիկը երկու է դառնում:

Եթէ այսպէս մի քանի ժամ՝ շարունակուի, դիտէք ինչ սարսափելի թիւ կը դառնայ: Ահա հաշուեմ, տեսէք:


Եթէ ենթագրենք, որ փայտիկները 20 րոպէում են կիսվում, կը տեսնենք, որ դարձեալ մի քանի ժամուայ մէջ սարսափելի թիւ կը կազմուի: Քանի րոպէից յետոյ մէկը կը դառնայ երկու, բառասուն րոպէից յետոյ—4, մի ժամ և 20 րոպէից—16, երեք ժամից—512, չորս ժամից—4056, 5 ժ.—32,000, և 10 ժամից յետոյ նրանց թիւը կը հասնի 1000 միլիօնի:

Մի բժշկի ասելով, մի մարդ, որի մէջ մի բակտերիա է մտել, կը պառկի քնելու և առաւօտը կը զարթնի 1000 միլիօն բակտերիա մէջը: Այս թիւը գժուար է երեակայել: Մի հասկացողութիւն տալու համար կ'ասենք, որ եթէ այդքան բակտերիան շարենք իրար ետևից, կըստանանք մի թել, որ 100 վերստ երկարութիւն կ'ունենայ, իսկ 24 ժամից յետոյ այդ թելը այնքան երկար կը լինի, որ կարելի կը լինի նրան 10—15 անգամ փաթաթել երկրի շուրջը: Նա 10000 փութ ծանրութիւն կ'ունենայ:

Բակտերիաները մեծ մասամբ այս ձեռվ (կիսուելով) են բազմանում:

Բայց կայ և մի ուրիշ ձեւ:


Նայեցէք այս նկարին (տ. նկ. 10):



Նկ. 10

Արանք էլ բակտերիաներ են, բայց սրանց ծայրերին տեսնում ենք գնդիկներ։ Արանք ցուպիկների հունդեր են, որոնք կոչվում են սաղմ։

Մի բակտերիայի մէջ կարող է գոյանալ երկու և աւելի հունդ։ — Նկարի աջ կողմի մանրիկը եօթ հատ է տուել, իսկ նկ. 11-ի վրա տեսնում ենք որ շարանները մեծ քա-




Նկ. 11

նակութեամբ հունդեր են տուել, և նրանցից շատերն արգէն դուրս են եկել պարկերի միջից և աղատ լողում են։

Զարմանալի դիմացկուն են այդ հունդերը. ոչ ուտելիք են պահանջում նրանք, ոչ խմելիք։ Ցուրտը, չորութիւնը չեն սպանում նրանց։ Նրանք անկենդան են, ինչպէս ցորենի հատիկը, մնում են ընկած տների պատերին, յատակի և ամեն տեսակ իրերի վրա. մի խօսքով ամեն տեղ։ Նրանք խառնը վում են նոյնպէս հողի ու քամու հետ և մի տեղից մի ուրիշ տեղ փոխվում։

Հենց որ հունդերն ընկնում են տաք ու խոնաւ տեղ, որտեղ նրանց համար մնունդ կայ, նրանք կենդանանում են ու բակտերիա դառնում, ինչպէս որ ցորենի հատիկը ծլում է ու հասկ դառնում։



Նկ. 12

Նայեցէք 12-դ նկարի վրա, տեսէք
ինչպէս հունդերից կամաց-կամաց ծլումեն
մանրիներ, երկարում ու բաժանվում նկա-
րի աջ կողմում մի հունդից ծլել է հինդ
բակտերիա, որոնք դեռ մի պարկի մէջ են,
բայց շուտով կը բաժանուեն իրարից:

Ասածներից ամենքը կը հասկանան, որ
մի հիւանդութեան բակտերիայի սազմը կա-
րող է երկար մնալ մի տեղ ու մի օր կենդա-
նանալ և էլի այդ հիւանդութիւնը տա-
րածել:

Օրինակ այսպիսի բաներ կարող են պա-
տահել.

Մի տաճ մէջ տիֆ էր ընկել, մի երկու
հոգի հիւանդացել էին ու առողջացել: Ա-
ռողջանալուց յետոյ տունը լաւ մաքրել են,
(ինչպէս ցոյց կը տաճք յետոյ) ու վերջացրել:
Անցնում է մի քանի ժամանակ. մէկ օր մի
քանի շորեր դուրս էք հանում պահարանից,
հագնում, և հիւանդութիւնը նորոգվում է:
Երբեմն տաճ յատակի տախտակները վեր-
ցնելիս առաջուայ ցաւերը լոյս են ընկ-
նում:

Այդ նշանակում է, որ բնած սազմերը
կենդանացել են ու հիւանդութիւն բերել:

թ.

ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Յակտերիաները, ինչպէս ասել ենք,
բուն են դնում ամեն տեղ ու զարգանում,
եթէ միայն ի հարկէ առատ սնունդ են
դժնում:—հոգի, ջրի, օդի, փտած բոյսերի
և սատկած կենդանիների մէջ, նոյնպէս և
մեր բոլոր ուտելեղէնների ու խմելիքների
մէջ:—մսի, կաթի, պանրի, գինու, հացի և
այլն:

Այս անչափ մանր բուսիկները սնընդ-
վում են, աճում և զանազան հրաշքներ
գործում:

Մի բանիսը պատմենք, որ կարդա-
ցողը հասկանայ, թէ ինչեր են անում նրանք,
երբոր աճում են մի տեղում:

Ամենքը գիտեն, որ եթէ դիմին թող-
նենք մի առժամանակ բաց շնի մէջ, նա
կը թթուի—կը քացախի:

Ի՞նչ պատահեց:

Առաջուայ ժամանակները, բանի դեռ
մանրիկները գտնուած չեին, դրա պատճառը
չեին հասկանում, բայց հիմի մենք գիտենք,
որ դրա պատճառը առանձին բակտերիաներ

են, որոնք օդից ընկնում են գինու մէջ, աշնում են արագութեամբ և գինին քացախ դարձնում: Եթէ գինու շի բերանը պինդ փակես խցանով ու զմուռով կպցնես (այնպէս որ օդ չմտնի), գինին չի քացիսի: Այս մանրիկի անունը դրել են քացախաքրովի բակտերիա:

Գիտենք նոյնպէս, որ կաթը երկար մնաւ լով նոյնպէս բրկում է, — դրա պատճառը նոյնպէս մի տեսակ բակտերիաներ են, որոնց կարելի է կարնաքրովի մանրիկ անուանել:

Իւղը, պանիրը դառնանում են ու վչանում նոյնպէս այն պատճառով, որ նրանց մէջ զանազան տեսակ բակտերիաներ են զարգանում:

Կան մի տեսակ մանրիկներ էլ, որոնք փուման բակտերիա են կոչվում, որովհետև փաեցնում են մեռած կենդանիների մարմինները և բոյսերը:

Գիւղացիք լաւ գիտեն, որ տնային կենդանիների (ձիու, էշի, տաւարի, ոչխարի) աղը տաքանում է ու գոլորշի (բուղ) է դուրս թողնում, երբ որ մի քանի ժամանակ կոլոնած է մնում մի տեղ, թէկուզ հենց ձմեռը ձիւնի տակ՝ Առհասարակ եթէ կու-

լոնած փէյինի երեսի շերտը դէն դցես, տակից գոլորշի դուրս կը գայ: Աղբը տաքացել է ու փտում է. Եթէ երկար ժամանակ մնայ, նա հող կը դառնայ:

Դրա պատճառը նոյնպէս փտուման բակտերիաներն են:

Ո՞րչափ բոյսեր են փտում և ինչքան կենդանիներ սատկում ամեն բոպէ: Երկրիս երեսը գարնանը ծածկվում է բոյսերով, որոնք աշնանը չորանում են, փտում ու ոչընչանում: Ո՞րչափ մարդիկ են թաղվում ու հող դառնում, ո՞րչափ կենդանիներ, խոշոր թէ մանր, փղից սկսած մինչեւ ամենամանը մըրաջիւնն ու միջատը, սատկում են՝ փտում և նոյնպէս խառնվաւմ հողին...

Այս հրաշըն էլ են բակտերիաները կատարում: Փտուման պատճառն էլ նրանք են: Նրանք միշտ գոյութիւն ունեն օդի մէջ, այնտեղից մտնում են սատկած կենդանու մէջ կամ բոյսի մէջ, այնտեղ աճում են ու փաեցնում գրանց: Առանց այդ էակներին չէին փտի ոչ ծառի տերել, ոչ կենդանու մարմինները:

Ուրեմն փտուման մանրիկների միջով է, որ կատարվում է Աւետարանի խօսքը թէ.

Հող էիր եւ հող դառնաս:

Ուրեմն երբոր մենք հոտած միս, պաշնիր կամ ձուկ ենք ուտում, կամ թէ չէ թթուած կաթ, նամշած իւզ ենք գործածում, պիտի խմնանք, որ դրանց մէջ աշագին քանակութեամբ բակտերիաներ կան:

Մի ուրիշ հրաշք էլ պատմեմ:

Ո՞վ չի տեսել երբ և իցէ, որ նոր թխած հացի վրա մի բանի ժամանակից, ետոյ կարմիր կէտեր են երեսում, կ'ասես վրան արիւն կաթեցրած լինի: Այդ կէտերը միկրօբների քաղաքներ են: Բացի նոր թխած հացից, այդ կարմիր ներկ տուող բակտերիաները քաղաքներ են կազմում նոյնպէս և գետնախնձորի, բրնձի և ուրիշ հացապտուզների վրա: Երբոր այդպիսի պուտեր երեսում էին նշխարի կամ մեռնի վրա, այդ թատօն բարկութեան նշան էր համարվում: Կան և այնպիսի բակտերիաներ, որոնք գեղին, կաշչ, մանուշակաղոյն, կապոյտ գոյներ են տալիս ջրին, ծառի արմատներին, ինչպէս և ձկան և ուրիշ կենդանիների մաին:

Երբոր մի վէրբ կեղուս են պահում: Նրա վրայի թարախը ներկվում է կանաչ, գեղին գոյնով:

Այս բոլոր մանրիկները կոչվում են ներկարար մանրիկներ, որովհետեւ իրանցից ներկ են դուրս թողնում:


Ճ.

ՎՆԱՍԱԿԱՐ ԿԱՄ ՀԻՒԱՆԴԱԲԵՐ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ

Նախընթաց գլխում մենք խօսեցինք անվաս մանրիկների մասին: Նրանցից շատերը մինչև անգամ շատ օգուտ են մարդուն, օրինակ. փտման բակտերիաները: Զէ որ նրանք փտեցնում են մեռած կենդանիներին ու բոյսերը և նրանցով հողը պարարտացնում: Հողագործները գիտեն, ու եթէ բանջարանցում կամ արտում աղը լցնեն հողի վրա ու վարեն, այդ հողը առասընջարեղէն ու հուճձ կը տայ: Ինչից է այդ: Նրանից, որ այդ աղի մէջ զարգանում են փտման մանրիկները, փտեցնում են այդ աղը և պարարտացնում հողը: Ուրեմն տեսէք, թէ նրանի օգտաւէտ են մեզ այս բակտերիաները:

Կան և ուրիշ շատ օգտաւէտ բակտերիաներ, որոնց մասին մենք չենք կարող այս տեղ երկար խօսել:

Բայց այս անվասաների կողքին կան և սարսափելի վնասակար մանրիկներ, որոնք կոչում են հիւանդաբեր կամ ախտածին, որովհետեւ, ինչպէս վերև յիշել ենք, որանք են վարակիչ հիւանդութիւններ առաջացնողները (տ. նկարներ 13, 14, 15, 16, 17 և 18):



Նկ. 13. Խօլերայի բակտերիաներ (ստորակէտներ):


Մենք ասել ենք, որ առհասարակ բուլոր մեռնողների կէսը հիւանդաբեր բակտերիաների սպանածներն են: Ուրիշ խօսքով. եթէ այս վնասակար բակտերիաները չլինէին, երկու անգամ աւելի քիչ մարդ կը մեռնէր երկրիս երեսին...

Ո՞ր ջրհեղեղը, ո՞ր երկրաշարժը կամ ո՞ր գաղանք այսափ ոյժ ունի:

Մենք չըլապատուած ենք անտեսանելի անհամար թշնամիներով, որոնք կոտորում


են մեզ, մեր երեխաներին ու հազար տեսակ ցաւերի ու հիւանդութիւնների պատճառ գառնում: Նրանք լցուել են աշխարհը լացով ու սգով: Մի մայր չկայ, որ կորցրած վինի մի զաւակ նրանց ձեռքից:

Կամյանկարծ վրա է տալիս ժանտախտն




Նկ. 14. Ժանդախտի բակտերիաներ:

ու խօլերան ու հնձում, հազարաւոր մարդիկ տանում և զարգանդ գցում աշխարհ, կամ




Նկ. 15. Խնդլուէնցալի բակտերիաներ:

բութէն ու ծաղիկը, դիմիթերիտն ու տիֆլը
ընկնում են խեղճ անմեղ երեխանեքի մէջ ու
մանր դիակներով գերեզմանացները լցնում:
կամ թէ չէ ինֆլուէնցան է մէջտեղ դալիս
ու ամբողջ ընտանիքներ հիւանդացնում:
պառկեցնում և աշխատանքից զրկում, կամ



Նկ. 16. Թոքախտի բակտերիաներ:

վերջապէս թոքախտն է, այդ սարսափելի
կրծքացաւը, որ բնկնում է մեր թոքերի մէջ,



Նկ. 17. Վերադարձ տենուի մանոիկներ:

ուտում նրանց, թունաւորում մեր մարմինը
ու գերեզման տանում մեղ գեռ երիտա-
սարդ հասակում, աշխատանքի եռուն ժա-
մանակ!

ԺԱ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄՏՏՈՒՄ ՄԵՐ ՄԷՋ ԱՅԴ ՍԱՐՍԱ-
ՓԵԼԻ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ԵՒ ՀԻՒԱՆ-
ԴԱՑՆՈՒՄ ՄԵՋ

**ՄԵՆՔ ԳԻՒԵՆՔ, ՈՐ ՎԱՐԱԿՄԱՆ ամենա-
մեծ աղբիւրը հիւանդն է:**

Հիւանդի արտաթորութիւնների (կըզ-
կզանք և մէջ), նրա քրտինքի, խորխի ու
թուքի, նրա վէրըերի թարախի, կաշու թեփի
(օրինակ՝ բութէշի) մէջ ահագին քանակու-
թեամբ հիւանդաբեր, վարակիչ բակտերիա-
ներ կան. Եթէ չոչնչացնենք իսկոյն, նրանք
կ'աճեն ու կը տարածեն հիւանդութիւնը:

Եթէ հիւանդի արտաթորութիւնները
չորանում են՝ մնում, բակտերիաներն էլ չո-
րանում են, մեծ մասամբ վշանում են, բայց
մի մասը հունդեր է տալիս, իսկ մենք գի-
տենք, որ հունդերը երկար ժամանակ կա-
րող են չոր մնալ, բայց հէնց որ ընկան մի

խոնաւ ու կեղտոտ տեղ, կենդանանում են ու բակտերիա են գառնում:

Այսպէս, կարմրուկի հունդը կարող է կենդանանալ 6 շաբաթ՝ չոր մնալուց յետոյ, քութէշինը—5 ամիս, ծաղկինը—2 տարի, տիֆինը—6 ամիս, թոքախտինը—7 ամիս և այլն. իրանք հիւանդները առողջանալուց յետոյ էլ գեռ երկիւղալի են, օրինակ դիֆերիտի և քութէշի մէջ։ Մի քանի հիւանդութիւնների մէջ (օր. խօլերա) դիակներն ևս վտանգաւոր են գառնում, եթէ խոր չեն թաղուած, որովհետեւ նրանց միջի եղած բակտերիաները անցնում են հողի մէջ, այնտեղ աճում են, վարակում են վերևի շերտերը և կարող են կպչել մարդկանց։

Վարակը ապրում է հիւանդի սենեակի, յատակի ու պատերի վրա, կահակարասիքների վրա, նրա անկողնու ու հագուստի վրա, նրա գործածած ամանների, գդանների, չանդալդանակի, կարդացած դրբերի, խազալիքների, վերջապէս այն ամեն բաների, ինչ որ հիւանդի սենեակումն են գտնվում և գործածվում։

Հիմի տեսնենք, թէ ինչ ճանապարհով են մտնում մեր ներսը այդ հիւանդաբեր բուսիկները։

Նախ մանրիկները կարող են ընկնել մեր կերակուրի ու խմելիքների մէջ և կուգ գնալ սրանց հետ միասին։

Ճանճերն էլ կարող են հեռուից բերել վարակը ու նստելով մեր ուտելիքի վրա, վարակել նրան, իսկ նրա միջով և մեզ։

Այս է պատճառը, որ բժիշկները խորհուրդը են տալիս համաճարակ հիւանդութիւնների ժամանակ ուտելեղենները ծածկել կամ ցանցի տակ դնել, որ նանները չնսեն վրան։

Երկրորդ ճանապարհը մեր քովերն են։ 0դի մէջ փոշուն խառնուած տհագին քանակութեամբ բակտերիաներ կան. շնչելիս մենք նրանցից շատերին ներս ենք քաշում օդի հետ մեր թոքերը։ Միգիտնական հաշուել է, որ մարդ օրական ամենաքիչը 300 հազար մանրիկներ է կուլ տալիս, բարեբաղդաբար դրանց մէջ շատ քիչ են լինում միասակարներ։ Բայց չէ որ մի վնասակար մանրիկն էլ բաւական է, որ հիւանդացնի մեղ ու սպանի։ Ի հարկէ առողջ թոքերի մէջ նրանք մեծ մասամբ ոչնչանում են, բայց եթէ թոքերում հազ կայ, կամ առհասարակ թոյլ են նրանք, բակտերիան կարող է այնտեղ մնալ ու աճել (օր. թոքախտինը)։

Մի ուրիշ (երրորդ) ճանապարհ էլ կայ, — դա մեր կաշին է: Եթէ մեր մորթու վրա մի քերծուածք կամ ճեղքուած կայ, բակտերան կարող է մանել մեր արեան մէջ ու թունաւորել մեզ: Այդ է պատճառը, որ վերքը միշտ պէտք է մաքուր պահել ու վրան զանազան կեղաստ բաներ չդնել, ինչպէս, օրինակ՝ ոստայն, ցեխ, ձուածեղ և այլն, որովհետեւ դրանց մէջ հաղար տեսակ բակտերիաներ կան. Նրանք կը լցուեն արեան մէջ և կը թունաւորեն հիւանդին:

Եատերը իրանք տեսած են կամ ուրիշից լսած, որ վերքից մարդիկ թունաւորվում են և մեռնում:


Եատ զգոյշ պիտի լինել միջատների խայթոցից ևս ձանձը և ուրիշ միջատները կարող են իրանց վրա վարակիչ բակտերիաներ ունենալ ու, ծակելով մեր մարմինը, վերքի մէջ մոցնել:

Ինչի՞ երբեմն ծննդականները մեռնում են, դա էլ կեղաստ պահելուց է: Գիտենք, որ ծննդեան ժամանակ կնոջ վրա պատառուածքներ ու քերծուածքներ են լինում: Ուրեմն պէտք է նրա տեղաշորերը, շաղիկը, գործածած լաթերը միշտ մաքուր լինեն, չոլետք է կեղաստ ձեռներով դիմէել

նրան, այլ ընդհակառակը. օրը մի քանի անգամ պիտի եփ տուած ու գոլացրած ջրով սեռական անդամները լուանալ:

Իսկ եթէ կեղաստ են պահում, կամ տատմօր ձեռները կեղաստ են լինում, այն ժամանակ յանկարծ տեսնում են, որ ծնընդկանը սաստիկ գոլացրեց ու մեծ տաքութիւն ստացաւ, յետոյ թուլութիւն եկաւ վրան, ուշը կորցրեց ու մեռաւ: Ասում են՝ «Երեխայի վրա» մեռաւ:

Ընթերցողը ահշուշտ տեսած կը լինի կարմիր քամի ստուած հիւանդութիւնը: Յան-



Նկ. 18. Թարախածին գնդիկներ:

կարծ սաստիկ գող է գալիս, որ կէս ժամ, մի ժամ և աւելի է տեսում, յետոյ վրա է տալիս սաստիկ տաքութիւն և դէմքի վրա երեսում է մի փոքրիկ կարմրութիւն (առ-

հասարակ քթի մօտ), կաշին այդ տեղ ուռած է, կարմրած ու ցաւում է։ Դա կարմիր քամին է (ռուսերէն—քոյա)։ Նա տարածվում է ամբողջ երեսը, գլուխը, մի տեղ հանդչելով, մի ուրիշ տեղ բռնկուելով։

Ինչո՞ց առաջ եկաւ այդ հիւանդութիւնը։

Դարձեալ նրանից որ կաշու մի ճեղքուածով ներս են մտել կարմիր քամու մանրիկները։

Ո՞ւմ չի պատահել, որ մի չոփ կամ փայտի կտօր մտնի ձեռը կամ քորոցով ու դանակով մատը ծակուի։ Շատ անդամ ոչինչ չի լինում։ չոփը հանում են ու վերջանում է։ Բայց պատահում է նաև, որ յանկարծ մի երկու օրից յետոյ մատն ուռչում է, մատնառնչ է դառնում, կամ աւելի ևս զատ է լինում։ ամբողջ ձեռն ուռչում է, ուռուցքը տարածվում է թեր և ամբողջ կուռը կարող է ուռչել։ Այն ժամանակ հիւանդը սաստիկ ջերմ է ունենում և կարող է պատահել մինչև անդամ, որ հիւանդը մեռնի։

Սա էլ մանրիկների գործ է, որոնք այն կտոր փայտի կամ դանակի վրա կողած են

եղել ու լցուել են ծակուած տեղը, այնտեղ բազմացել ու բորբոքում առաջացրել։

Յիշած կաշու հիւանդութիւնները քարխածին գնդիկների գործն են (տ. նկ. 18). առհասարակ որտեղ թարախ կայ, այնտեղ անպատճառ այդ ձեի մանրիկներ կը գտնէք։

Հիմի դուք կ'ասէք.

— Մենք հարիւրաւոր վիրաւորուած մարդիկ ենք տեսել, ծննդկան ենք տեսել, և շատերը լաւացել են, ոչինչ էլ չի պատահել նրանց։

— Ի հարկէ, ոչ, հօ ամենքին չի պատահում այդպիսի անբազգութիւն։ Բայց եթէ շատերի վրա անդնաս է անցնում, այդ գեռ չի նշանակում, թէ մենք չպիտի զգոյշ լինենք. ասենք թէ տասից մէկը կամ հէնց հարիւրից մէկն է միայն վէրքից թունաւոր վում ու մեռնում, բայց չը որ հէնց այդ մէկը կարող ես դու լինել։

Բացի այս երեք ճանապարհներից, բակտերիան կարող է մտնել մեր մէջ նոյնպէս և սեռական անդամների միջով (սեռական յարաբերութիւնների միջացին), այսպէս վարակվում են մարդիկ սեֆիլիսով (զատ ցա-

ւով) ու սուսունակով և կակուղ շան-
կրով*):

Ժ.Բ.

Ի՞նչն է ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԻՆ

Մանրիկների ամենամեծ թշնամիները.
Մայրութիւնն ու լոյսն են:

Եւ, ճշմարիտ որ, նրանք աճում են խո-
նաւ, մութ ու կեղտոտ տեղերում, այն ինչ
չոր մաքրուր ու արևաշտ տեղերում կոտոր-
վում են՝ վչանում։ Արել յատկապէս կոր-
ծանում է նրանց Խօլերայի ու տիֆի բակ-
տերիաներն անդամ; մի քանի ժամ արեի
ճառագայթների տակ մնալով, ոչնչանում
են, կարմրուկինը, բութէշինը աւելի ևս ա-
րագ, այսպիսով արել մաքրում է վնասա-
կար բակտերիաներից դետինը (գոնէ վերելի
շերտերը):

Այսպէս, արեգակի ճառագայթները
ուղղակի սպանում են մանրիկներին։ Բայց
հասարակ լոյսն էլ աղդում է նրանց վրա,
միայն ի հարկէ աւելի դանդաղ կերպով։

*) Տե՛ս իմ զրքուկները, «Սիփլիս», Կակուղ շանկը և
Սուսունակը և ակատ ցաւու,

Մայրութիւնը նրանով է վնաս բակտե-
րիաներին, որ մաքրուր տեղերում նրանք
կերակուր չեն դոնում իրանց համար ու
կոտորվում են։

Զափազանց Տաքութիւնն ու սառնու-
թիւնը նոյնպէս սպանում են նրանց։

Նրանցից շատերը ոչնչանում են, երբ
եռացնում ենք ջրի մէջ։ Օրինակ, եթէ հի-
ւանդի սպիտակեղինը լաւ եռացնենք ջրի մէջ,
նրա վրայի մանրիկները կը փչանան։

Նրանք ոչնչանում են նոյնպէս և ջրի
դոլրշու մէջ։

Սառնութիւնը սպանում է շատ հիւան-
դաբեր մանրիկներ, սակայն ոչ բոլորին։
Մի բանի տեսակները կարող են նոյնիսկ
ձիւնի ու սառուցի մէջ ապրել. նրանցից
գտել են մինչև անգամ կարկտի մէջ։

Այնուամենայնիւ շատ տեսակները
ձմեռը ոչնչանում են, և այդ է պատճառը, որ
վարակիչ հիւանդութիւնները ձմեռ ժամա-
նակ առհասարակ նուազում են։

Յետոյ կան մի շարք դեղեր, որոնք
ոչնչացնում են բակտերիաներին։

Սրանցից ամենաէժանը և ամենաձեռն-
տուն—կիրն է, յետոյ գալիս է ծծումբը և
զանազան ուրիշ դեղեր, ինչպէս են. կար-

բոլեան թրու, քօրաքրու, սուլեմայ, սպիրտ
և ուրիշները։ Սրանց ընդհանուր անունը
ախտահանիչ կամ ախտաջին (այսինքն ցաւի
թոյնը հանող ու ջնջող) դեղեր է։

Նրանց գործածութեան մասին մենք
կը խօսենք գրքոյի երկրորդ մասում։

ԺԳ

Ի՞նչ է ԴԱՌՆՈՒՄ ՄԱՆՐԻԿԸ, ԵՐԲՈՐ ՆԵՐՄ Է
ՄՏՆՈՒՄ ՄԵՐ ԹՈՐՔԵՐԸ, ԿԱՄ ՄԵՐ ՍՏԱՄԲՔՄԸ,
ԿՅՄ ՄԵՐ ՎԵՐՔԵՐԻ ՄԵՋ

Ի՞նչ ճանապարհով էլ որ մտնի մեր
մէջ բակտերիան, նա կամ փշանում է կամ
բազմանում-լցվում մեր արեան մէջ ու թու-
նաւորում մեզ։

Շատ շատերը փշանում են մեր թորե-
րում, իսկ նրանք, որոնք կերակուրի հետ են
կուլ գնում, մարտվում-հալվում են ստա-
մորսի մէջ։

Առհասարակ մեր մարմինը ահագին ոյժ
ունի, և մանրիկները մեծ մասամբ ոչնչա-
նում են մեր մարմնի մէջ։ Եթե այդպէս
չլինէր, ինչպէս վերևու ասել ենք, կեանքը

աշխարհիս երեսից մի օրում կը վերջանար
և աշխարհը կը մնար բակտերիաներին։

Եւ յիրաւի, մարդիկ երկար տարիներ
առողջ ապրում են, թէև գուցէ ամեն օր
հազարաւոր վնասակար բակտերիաներ են
կուլ տալիս։

Մի գիտնական հաշուել է, որ մարդ
ամենաքիչը օրական 300 հազար բակտե-
րիա, կամ սրանց հունդերն է կուլ տալիս
ու մարսում։

Ի՞նչն է մեր պաշտպանը։ Ի՞նչն է ոչնչա-
ցնում մեր մէջ մտած բակտերիաները, որ
նրանք չեն աճում ու չեն կարողանում մեզ
վնասել։


Այդ պաշտպանը մեր մարմնի հիւթերն
են, մեր մարմնի մասնիկները, մի խօսքով.
մեր ամբողջ մարմինն է։

Բայց մեր գլխաւոր պաշտպանը արիւնն
է։ Տեսնենք թէ ինչպէս։

Շատերը կարծում են, թէ արիւնը մի
կարմիր հեղուկ է (ջուր է)։ Բայց այդ
սխալ է։

Նայեցէք այս նկարին (տ. նկ. 19)։ Մի
կաթիլ արիւն կաթեցրած է ապակու վրա
ու դրած մանրացոյցի տակ։

Ահա թէ ինչ է երեսում այդ կաթիլ աշբեան մէջ.




Նկ. 19. Արեան գնդակները. ա, ա—սպիտակ և
բ, բ—կարմիր:

Տեսնում ենք, որ այդ կաթիլ արիւնը բաղկացած է անդոյն հեղուկից, որի մէջ լողում են երեք տեսակ գնդակիներ. 1) կլոր,—որոնք կարմիր են ներկուած և կոչվում են կարմիր գնդակներ (բ), և 2) մեծ անդոյն—սպիտակ գնդակներ (ա):

Եթէ կարմիր գնդակները առանձին գիտենք (տ. նկ. 20), կը տեսնենք, որ նրանք կլոր ու տափակ են դրամի պէս (ձև. ա և բ), իսկ իրար վրա դարսուելով կազմում են փոքրիկ սիւնակներ (ձև գ):

Սպիտակ գնդակները (ձև դ, ե, գ, է, լ և թ) զանազան ձևեր են ընդունում, թելիկ-




Նկ. 20. ա, բ, շ—կարմիր գնդակներ. դ, ե, գ, է,
լ, թ—սպիտակ գնդակներ:

ներ են արձակում իրանց միջից ու էլլի ետքաշում, կարծես կենդանի էակներ լինեն. առհասարակ նրանց ձևերը շատ փոփոխական են:

Այս սպիտակ գնդակներն են մեր պատճանը: Երբոր մեր մի տեղում մի որևէ բակտերիա է մտնում, սրանը իսկոյն դուրս են գալիս երակների (արեան խողովակների) միջից, վրա պղծնում ու լափում նրանք

Նայեցէք այս նկարին (նկ. 21): Տեսնում
էք այս ցանցը.—սա բաղկացած է արեան
ամենամանր խողովակներից, այնքան մանր,



Նկ. 21. Արեան ամենամանր (մազային կոչուած) անօթները:


որ պարզ աչքով անտեսանելի են, և նրանց տեսնելու համար հարկաւոր է վերցնել կաշու մի հաղիւ նշմարելի մասնիկ ու դնել մանրացոյցի ապակու վրա: Այս խողովակները կոչվում են նոյնպէս արեան անօթներ, որովհետեւ նրանց մէջ է շրջում մեր արիւնը: (Ամենքը գիտեն, որ արիւնը սրտից լցվում է անթիւ մեծ ու

մանր խողովակների մէջ ու տարածվում մեր մարմնի բոլոր մասերը: Այս խողովակները կոչվում են երակներ և ընչերակներ): Մեր նկարի վրա ներկայացրած են երկու անօթներ (1 և 2), որոնցից գուրս են գալիս բազմաթիւ մանր խողովակներ, որոնք նոյնպէս ճիւղաւորվում են, յետոյ երկու կողմի խողովակները խառնվում են իրար ու կազմում շատ խիտ ցանց (3), որի միջով արագութեամբ շրջում է արիւնը:

Հիմա վերցնենք այս մանր խողովակներից մի երկուսը և շատ մեծացնենք. ահա թէ ինչ կը տեսնենք (տ. նկ. 22).

Անօթների մէջ լողում են երկու տեսակ գնդիկներից էլ.—կարմիր (ա, ա, ա) և սպիտակ (բ, բ, բ): Սպիտակները, ինչպէս տեսնում էք, կպած են խողովակների պատերին և մի քանիսներն արդէն պողեր են արձակել և ծակել են խողովակի պատը որ գուրս գան. շուտով ամբողջ գնդակը կը սեղմուի և այդ անշմարելի, չափազանց

Փոքր ծակով դուրս կը գայ, իսկ ծակը խեղոյն կը փակուի:



Նկ. 22. Ամենամանր կամ մազային խողովայներ:

Դուրս գալով սպիտակ գնդակը, յարածակվում է մանրիկի վրա և կուլ է տալիս նրան (տ. նկ. 23):



Նկ. 23. Սպիտակ գնդակը կլանում է մանրիկին.
ա—սպիտակ գնդակ, բ—մանրիկ:

Չոփի նմանը (բ) մանրիկն է, իսկ մեծ մարմինը (ա) սպիտակ գնդակը, որ ատամներ է արձակում, բռնում է մանրիկն, իր ներսն է առնում ու վերջիվերջոյ կլանում-ոչնչացնում է:

Եթէ բակտերիան արեան մէջն է մըտնում, այն ժամանակ սպիտակ գնդակները ուղղակի կլանում են նրանց:

Այս բոլորը կարելի է գիտել միմիայն խոշորացոյցով.—սա մի կոիւ է գնդակների ու մանրիկների մէջ։

Եթէ գնդակներն են յաղթում—հիւանդը առողջանում է, իսկ եթէ բակտերիաները—նա մեռնում է։

Երբեմն կոիւը երկարում է, այն ժամանակ հիւանդութիւն էլ երկարում է, և եթէ հիւանդութեան միջոցին հիւանդը լաւ ու վատ է գառնում, այդ ցոյց է տալիս, որ յաղթութիւնը կամ գնդակների կողմն է անցնում, կամ բակտերիաների։

ԺԴ

Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ ՀԻՒԱՆԴԱՑՆՈՒՄ ՈՒ ՄԱՀԱՑՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ

Հիմա պէտք է բացատրենք, թէ ինչ է պատահում, երբոր մանրիկները բուն են դնում ու աճում մեր մարմնի մէջ։

Եթէ նրանք կարողանում են բուն դնել մեր մարմնի մի որևէ տեղում, այնտեղ աճում-բազմանում են, յետոյ այդ բնից նոր ծնած բակտերիաները տեղափոխվում են ուրիշ տեղեր և այլն։

Թոքախտի մանրիկները առաջ աջ թէ ձախ թոքի մի որևէ կէտում բուն են դնում ու զարգանում։ Յետոյ այդ կէտից նրանք բորբոսի նման տարածվում են թոքերի միւս մասերի վրա և կամաց-կամաց հալեցնում-վտեցնում են թոքերը։

Դիմքերիտի բակտերիան բուն է դնում բդի ու բթի մէջ և այնտեղ զարգանում։

Տիմքինը մանում է աղիքների մէջ և այնտեղ (աղիքների ներսի կողմից) խոցեր առաջ բերում։

Վերջապէս միքանի հիւանդութիւնների բակտերիաները իրանց սիրած տեղն ունեն, որտեղ աճում-զարգանում են։ Բայց կան միշտը ուրիշ հիւանդութիւններ, որոնց միկրօբը որոշ տեղ չունի, այլ յանկարծ զարգանում է ու տարածվում ամբողջ մարմնի մէջ։ Հիմի տեսնենք, թէ ինչպէս են ազդում բակտերիաները մեզ վրա։

Հիւանդաբեր բակտերիաները իրանց համար սնունդ են վերցնում մարմնի այն մասերից, որտեղ բուն են դրել։ Օրինակ, գիֆթերիտի բակտերիան բդի մէջ, թոք-ախտինը թոքերում, տիֆինը աղիքների մէջ։ Նրանք ուղղակի ծծում-հալեցնում են այս մարմնի մանրիկները։ Դրանից առաջանում

Են խոցեր, փոսեր, որոնք լցվում են թարախով։

Սարսափելին այն է, որ նրանք թունալում են հիւանդին և ահա թէ ինչպէս Դուք գիտէք, որ այս վարակիչ հիւանդութիւնները առանց ջերմի չեն լինում։ Տիֆլ, քութէշը, դիֆթերիտը, ծաղիկը, խօլերան, թոքախտը, թոքերի բորբոքումն և միւսները, ամենքը միշտ մեծ տաքութիւն են բերում հիւանդին։ Ջերմի հետ հիւանդը դում է սարսափելի թուլութիւն, գլխացաւ, ցաւ ողնաշարում, անդամների մէջ, կորցնում է ախորժակը, քնէութեան, երբեմն էլ անյուշութեան մէջ է ընկնում, և հէնց այդ դրութեան մէջ էլ երբեմն մեռնում է։

Ի՞նչ պատահեց. որտեղից առաջ եկաւ այդ դրութիւնը. կարծես հիւանդ թունաւորուեց։

Եւ ճիշտ որ թունալորուեց նա, որովհետեւ բակտերիաները թէկուղ հէնց մենակ բգում բուն դրած լինեն (ինչպէս դիֆթերիտի մէջ), այնուամենայնիւ թունաւորում են հիւանդին, որովհետեւ նրանք իրանցից մի տեսակ սարսափելի թոյն են դուրս թողնում։ Այդ թոյնը լցվում է արեան մէջ ու նրա հետ տարածվում է մեր

ամբողջ մարմնի մէջ, որովհետեւ արիւնը ամեն տեղ կայ. որտեղ ասեղով ծակես— արիւն դուր կը գայ։ Այս թոյնը ահուելի է, նրա մի ամենաանշան մասնիկը, որ ոչ մի կշեռքով չի կարելի չափել, թունաւորում է ու սպանում մանր կենդանիներին։

Ահա բակտերիաների վնասը Եթէ այդ թունաւորումն չլինէր, նրանք ինըն ըստ ինքեան այնչափ էլ սարսափելի չէին լինի մեղ համար։

Ուրեմն բակտերիաների վնասը այն է, որ նրանք անդադար բոյն են արտադրում։ Այդ թոյնն է որ հիւանդացնում ու սպանում է մեղ։

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԺԵ

Ի՞նչՊէս ՊէՏՔ է ԿՌՈՒԵԼ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԷՄ

Ի՞նչ պէտք է անել վարակիչ հիւանդութիւնների դէմ: Ի՞նչպէս պէտք է պահպանենք մեղ ու մեր ընտանիքը վարակումից և ի՞նչպէս խնամենք հիւանդին:

Ի՞նչպէս կռուենք մի թշնամու հետ, որին չենք տեսնում: Եթէ դա գայլ լինէր, կարող էինք մեր գոներն ու լուսամուտները փակել, որ ներս չմտնի, կամ հրացան բռնած դարան մտնել: Խոկ ի՞նչ անենք բակտերիաների դէմ:

Նրանք լցրել են օդը, ջուրն ու հողը, վլստում են մեր կերածի ու խմածի մէջ, բուն են դրել մեր հագուստի մէջ, մեր կաշու վրա ու ամեն բոպէ աշխատում են մանել մեր մարմնի խորքերն ու սպանել մեզ: Ել ի՞նչպէս աղատուենք նրանցից:

Եւ միժէ այդ կարելի՞ է:

Այն, և գիտութիւնը մեզ սովորեցնում է, թէ ի՞նչպէս:

Բակտերիաների հետ կարելի է երեք միջոցով կռուել.

ԱՌԱՋԻՆ—չպէտք է քողնել, որ նրանի մօտենան մեզ:

ԵՐԿՐՈՐԴ—պէտք է աշխատել ոչնչացնել նրանց այն տեղերում, որտեղ գիտութեան ցուցմունենով նրանի պէտք է որ լինեն (հիւանդի շուրջը եւ նրա իրերի վրա, զրի մէջ եւ այլն):

ԵՐՐՈՐԴ—կազդուրել մեր մարմինը, որպէսզի ուժեղանան նաեւ միկրօր ուսող սպիտակ գնդակները ու հետութիւնով ոչնչացնեն այն հիւանդաբեր մանրիկներին, որոնց կը յաջողուի ներս մտնել:

ՄԵՆՔ մէկ-մէկ կ'ուսումնասիրենք այս երեք միջոցներն էլ:

Վարակիչ հիւանդութիւնների դէմն առնելու համար կառավարութիւնն ու բաղաքները միջոցներ են գործ դնում:

Բայց այդ միջոցները բաւական չեն. ամեն հասկացող մարդ ինքն էլ պիտի իրան պաշտպանի, թէ չէ մենակ միայն կառավարութեան վրա յոյս դնել ու ձեռները ծալած նստելը—թէ մեղք է և թէ յիմարութիւն:

Առաջ տեսնենք, թէ ինչ են անում
կառավարութիւնն ու քաղաքային վարչու-
թիւնները վարակիչ հիւանդութիւնների գէմն
առնելու համար, յետոյ կ'ասենք թէ ինքը
ժողովուրդն ինչ պէտք է անէ։

Ժ.Զ

Ի՞նչ է ԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴէՄ

Վարակիչ հիւանդութիւնների մէջ կան
երկուսը, որոնք սարսափ են գցում ժողո-
վրդի վրա, երբ երկում են մի երկում։
Դրանք են խօլերան ու ժանտախտը (չուման)։

Այս ցաւերը սարսափելի արագութեամբ
տարածվում են երկրից-երկիր, այդ պատ-
ճառով էլ տարափոխիկ են կոչվում։

Այս հիւանդութիւնները կարճ միջոցում
ահագին քանակութեամբ զոհեր են տանում,
ուրիշ խօսքով. որանք համանարակ հիւան-
դութիւններ են։ Ուրեմն խօլերան ու ժան-
դախտը տարափոխիկ և համանարակ ցա-
ւեր են։

Այս հիւանդութիւնների երկալուն
պէս, կառավարութիւնը խիստ միջոցներ է

գործ գնում, որպէսզի հիւանդութիւնը
չտարածուի երկրից-երկիր, այլ տեղնուտեղը
խեղդուի-ոչնչանայ։

Այդ նպատակով նա գործ է գնում
հետեւեալ միջոցները.

1. Կարանին կամ քառասնեակ եւ
ըլթայ (կօրդօն) վարակուած տեղից եկող-
ների համար։

Եթէ հարեւան տէրութեան մէջ (օրինակ
Պարսկաստանում կամ Տաճկաստանում)
ժանտախտ կամ խօլերա կայ, տէրութիւնը
այնտեղից եկողներին մի 10—15 օր պա-
հում է սահմանի վրա առանձին տներում։
Այդ արգում է այն նպատակով, որ եթէ մէջ-
ները վարակուած մարդ կայ, այդ ժամա-
նակամիջոցում կ'երևայ։ Նոյնպէս և հիւանդ-
երկրներից նաւերով եկածներին չեն թոյլ
տալիս իսկոյն ափ դուրս գալ, այլ մի երկու
շաբաթ պահում են նաւերի մէջ, մինչեւ որ
ամեն կասկած փարատուի։

Այս կարանին է։

Եղբան աւելի խիստ միջոց է։ Վարակ-
ուած գիւղը, քաղաքը, կամ հէնց մի գա-
ւառ ու նոյնիսկ մի նահանգ, շրջապատվում
է ղինուրներով, որոնք բռնում են ճանա-
պարհները (շղթայ են կապում) ու հսկում

են, որ վարակուած տեղից մարդիկ չփախա-
չեն ուրիշ տեղեր ու հետաքրը հիւան-
դութիւնը տարածեն:

2. Կառավարութիւնն սփառում է, որ
հիւամդներին հիւանդանոց տանեն:

Ի՞նչն է ստիպում այդ անել: Կառա-
վարութեան նպատակն է հեռացնել հիւան-
դին, որ առողջները նրանից կը վարակուեն:
Ուրեմն այդ բանը մեր օգուտն է:

3. Ախտահանութիւն:

Հիւանդին հիւանդանոց տանելուց
յետոյ, կառավարութիւնը կամ քաղաքային
վարչութիւնը ստիպում է, որ հիւանդի
տունը ախտահանուի, այսինքն մաքրուի
վարակից:

Դրա համար հիւանդի անկողինն ու
սպիտակեղենը ուղղակի այրում են, իսկ
կահ-կարասիքը, յատակը, պատերն ու ա-
ռաստաղը մի որևէ ախտահանող գեղով
մաքրում:

4. Չորրորդ պահանջը, որ անում է կա-
ռավարութիւնը, այդ այն է, որ ամեն վա-
րակիչ նիւանդի տէր յայտնի ում նարկն է,
թէ իր տանը նիւանդ կայ: Այս պահանջի
նպատակն էլ այն է, որ բժիշկը դայ, հիւան-

դին բժշկի և կարեոր դէպքում հիւանդա-
նոց տանի ու տունը ախտահանի:

Ահա այս չորս կարեոր միջոցներն է
գործ դնում կառավարութիւնը ժողովրդին
խօլերայից ու ժանտախտից փրկելու հա-
մար: Ժողովուրդն էլ պիտի հասկանայ, որ
այս բոլորը եր օգտի համար է արվում:

ԺԷ

Ի՞նչ ՊէՏՔ է ԱՆԵԿՔ, ԵՐԲՈՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ
ՏՈՒՆ է ԸՆԿԵԼ

Երբոր անբաղդութիւնը պատահել է և
տունը ցաւ է ընկել, այն ժամանակ պիտի
աշխատենք առողջներին փրկել:

Պէտք է այսպէս անենք, որ միւսները
չվառակուեն հիւանդից:

Դրա համար անհրաժեշտ է հիւանդին
ջոկել առողջներից—առանձնացնել:

Առանձնացնելու ամենալաւ ձեւը—հի-
ւանդին նիւանդանոց տանելն է:

Հենց որ մէկի վրա վարակման նշան-
ներ երեացին, պիտք է իսկոյն բժշկին հրա-
ւիրել և նրա խորհրդին հետևել: Նա կ'ասի—
հարկաւոր է հիւանդանոց տանել թէ ոչ:

Հիւանդանոցի անունը տալիս եմու վախենում։ Մեր ժողովուրդը այնքան անհասկացող է, որ մինչեւ հիմա էլ վախում է հիւանդանոցից։ Կարծում է թէ հիւանդանոցում լաւ չեն նայում հիւանդին, իսկ այնպիսի մարդիկ էլ կան, որոնք մինչեւ անդամ կարծում են, թէ այնտեղ դժուար հիւանդներին թունաւորում են։

Վերջին, 1892 թուի, խօսերայի ժամամանակ մի աղքատ տան մէջ մի տղայ հիւանդացաւ, բոլոր գերդաստանը երկու սենեակի մէջ էր տեղաւորվում; իրար վրա թափուած։ Ես խօսին պատուիրեցի, որ հիւանդին հիւանդանոց տանեն, որպէսզի տունը աղտահանենք և միւս ընակիչներին փրկենք։ Այդ ասացի թէ չէ, ամենըը (մանաւանդպառաւ կանալ) սարսափելի վայնասուն բարձրացրին ու սկսեցին ինձ անպատիւ խօսքեր ասել, թէ ես ուզում եմ իրանց որդուն սպանել։ Ոստիկանը վրա հասաւ, բայց նա էլ ոչինչ չկարողացաւ անել ու հիւանդը միւս առաւոտ մեռաւ։

Թաղման միւս օրը այդ ընտանիքից երկուսն էլ հիւանդացան, յետոյ մէկն էլ։ Եւ բոլորն էլ մեռան։

Սարսափելի տեսարան էր. օրը մի դադաղ էին գուրս տանում այդ տանից։ Մնացել էին հայրը, երկու տղան, մի աղջիկ ու մի փոքրիկ երեխայ—առաջի մեռնողի տղան, Գիգօն։ Մի սիրուն, թմիլիկ, 8 տարեկան տղայ էր Գիգօն, կապոյտ աչքերով ու սե, դանգուր մազերով։ Մէկ օր եկան ինձ իմաց տուին, թէ Գիգօն «լուծ է ընկել ու անդադար փսխում է»։ Ես սարսափեցի, գնացի տեսայ, որ խօսլերան սկսվում է։ Երեխային շատ էի սիրում, էլ չկարողացայ համբերել։ Բոլորին կանչեցի։

—Եթէ իսկոյն չուղարկէք Գիգօյին հիւանդանոց, նա մինչեւ առաւօտ չի ապրի։

Պառաւ տատը սկսեց իր «վ՛ւյ, վ՛ւյ»-ը, բայց ես էլ չհամբերեցի ու գոռացի վրան։

—Այ պառաւ, քո մեղքից չորսին թաղեցիք, էս երեխային էլ ես ուզում սպանի։ Միենոյն է, երեխան այս տան մէջ անպատճառ կը մեռնի, իսկ եթէ հիւանդանոց տանէք, էլի յոյս կայ, որ առողջանայ։ Եթէ չթողնես տանեն, այս խեղճ երեխային սպանողը գու կը լինես։

Պառաւը լաց եղաւ ու բաշուեց մի անկին։ Հիւանդին խօսին զրկեցի հիւանդանոց, տնեցիներին ուրիշ տեղ տեղափո-

խեցի, տունը աղտահանել տուի, իսկ միւս
օրը գնացի ու յայտնեցի, որ Գիդօն փրկուած
է։ Տեսնէիք, թէ ի՞նչ էր անում այն պառաւը,
ինչպէս էր ոտերս ընկել ու օրհնում ինձ։
Այսպիսի գէպքեր շատ են եղել, բայց այս
մէկն էլ բաւական է։

Կրկին ասում եմ, որ վարակիչ հիւ-
անդներին իսկոյն ուղարկեցէք հիւանդա-
նոց։ Դրանից այն օգուտ կը ստանաք, որ
հիւանդի բժշկութիւնը աւելի յաջող կը լինի,
քան թէ տանը, և երկրորդ—առողջներին
կը փրկէք։

ԺԲ

Ի՞նչ Պէտք է Անեկ, Եթէ Հիւանդանոց
ԶԿԱՑ

—Իսկ եթէ տեղս հիւանդանոց չկայ,
օրինակ, մեր գիւղերում, կը հարցնէք դուք,
ի՞նչ անենք այն ժամանակ։

—Այն ժամանակ հիւանդին պիտի տանը
պահել, ուրիշ հնար չկայ։

Բայց տանը պահելով, հետեւալ զգու-
շութիւններն են հարկաւոր։

Ամենից կարևոր բանն այն է, որ ա-
ռողջներին (գլխաւորապէս երեխաներին) հե-
ռացնեն տանից, տանեն մի աղդականի-
կամ հարեանի տուն։ Իսկ եթէ այդ չի կա-
րելի, գոնէ գուրս բերեն այն սենեակից,
որտեղ հիւանդն է պառկած։

Եթէ բնակարանը միքանի սենեակից
է բաղկացած, հիւանդին պիտի ամենամեծ,
լուսաւոր ու մաքուր սենեակը փոխադրել,
իսկ առողջներին միւս սենեակներում պա-
հել ու թոյլ չտալ որ մտնեն հիւանդի մօտ։

Հիւանդին խնամելու համար մօտը կը
մնայ մայրը կամ մի ուրիշ հասակաւոր կին,
որ միւս երեխաների հետ ոչ մի յարակ-
ցութիւն չպէտք է ունենայ։ Նա ոչ պիտի
ինքը միւս սենեակները մտնի և ոչ էլ ուրիշ
մարդու ներս թողնի հիւանդի սենեակը։

Հիմի տեսնենք թէ ինչ պէտք է անեն
աղքատները, որոնք մի հացատան մէջ են
ապրում և իրար կողքի պառկում-քնում։

Մի մեծ անբաղդութիւն է, երբ այդ-
պիսի տան մէջ վարակիչ հիւանդութիւն է
ընկնում։ Բանը մի մահով չի վերջանում, եր-
բեմն միքանիսը (գլխաւորապէս երեխաները)
իրարից վարակվում են ու մեռնում։

Այս սարսափելի վտանգը միշտ պէտք է աչքի առաջ ունենալ: Երբոր երեխաներից մէկը հիւանդացաւ, էլ մուտքելու, տատանուելու ժամանակը չէ. որքան կարելի է շուտ պէտք է առողջներին մի կերպ հեռացնել տանից:

Անպատճառ հեռացնել, ի՞նչ արժէ ծնողի համար իր զաւակի կեանքը, էլ ի՞նչ տեսակ զոհաբերութիւն կայ աշխարհիս երեսին, որ մի ծնող չանէ իր որդուն փրկելու համար:

Դուրս տարէք երեխաներին, և միայն այն ժամանակ ետ բերէք, երբոր հիւանդն առողջացած կը լինի ու տունը բակտերիաներից աղատուած, այսինքն ախտահանուած:

Տեսնենք թէ ինչ է ախտահանութիւնը:

ԺԹ.

Ի՞նչ է ԱԽՏԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ եխ Ի՞նՉՊէՍ ՊէՏՔ է ԱԽՏԱՀԱՆԵԼ ՀԻՒԱՆԴԻ ՍԵՆԵԿԻ ԵԽ ՄԻՋԻ ԻՐԵԴԻՆԵՐԸ

Մենք միքանի անդամ կրկնել ենք, թէ հիւանդի սենեակը և միջի իրերը բակտերիաների ըներ են: Ուրեմն հիւանդի առողջանալուց յետոյ, կամ հիւանդանոց տանե-

լուց յետոյ, նրա սենեակը (աւելի լաւ է—ամբողջ կացարանը) պէտք է ախտահանուի, այսինքն. այդ սենեակի միջի վարակը (մանրիկները) ոչնչացուի:

Մեծ քաղաքներում (Թիֆլիզ, Բագու) քաղաքային վարչութիւնները մեծ հոգս են տանում այդ մասին: Այդտեղ հիմնուած են ախտահանիչ կայարաններ յատկապէս վարակուած տներն ու իրեղէնները ախտահանելու համար. այդտեղ կան բժիշկ ու ֆելչերներ, որոնք յատկապէս ախտահանութեամբ են պարապում:

Նրանք գալիս են վարակուած տները և ախտահանում, իսկ հիւանդի իրեղէնները տանում են կայարան այնտեղ մաքրում, ու ետ ուղարկում իրանց տիրոջ:

Այս բոլորը ձրի է անվում:

Մեր միւս քաղաքներում ու միքանի գիւղերում կան կառավարութիւնից նշանակուած բժիշկներ, նոյնպէս և մաօնաւոր բժիշկներ: Պէտք է դրանց գիմել: Դրանք, եթէ իրանք էլ չգան ախտահանելու, գոնէ լաւ կը հասկացնեն, թէ ինչ պէտք է անել և հարկաւոր գեղերը կը տան:

Մենք գրում ենք այնպիսի մարդկանց համար, որոնք չեն կալող բժշկի խորհրդի

գիմել, ուրեմն այնպիսի տեղերի բնակիչների համար, որտեղ բժիշկ չկայ, կամ բժիշկը բացակայ է այդ միջոցին:

ա. Հիւանդի սենեակի ախտահանումն.

Հիւանդից յետոյ սենեակի լուսամուտաներն ու դռները պէտք է լաւ փակել և 12—24 ժամ փակած պահել: Դրա նպատակն այն է, որ սենեակի մէջ օդ չխաղայ, որպէսզի օդի միջի թողը (բակտերիաների հետ միասին) նստի:

Երբոր թողը լաւ կը նստի, պէտք է ներս մտնել ու քաց ըորով կամ սպունդով սրբել սենեակի միջի կահ-կարասիքը և միւս բաները, յետոյ յատակը, պատերն ու առաստաղը, մի խօսքով. ամբողջ սենեակը, որպէսզի փոշին վերցուի. (ոչինչ չպէտք է թափ տալ սենեակի մէջ): Մաքրելուց յետոյ բոլոր բաները պէտք է դուրս տանել և սենեակի ախտահանել:

Եթէ պատերը պաստառած են (թուղթ կպցը ած), պէտք է հացի միջուկով մաքրել: Հացի միջուկը գունդ են անում ու պինդ-պինդ քսում պաստառին, այդ ժամանակ յատակի վրա թուղթ պէտք է փռել, որ փշանքը վրան թափուի. այդ հացի

փշանքները լիքն են բակտերիաներով, ուրեմն պէտք է ժողովել ու այրել:

Ով կարող է, պէտք է պատերը, օճորքն ու յատակը կարբօլեան լուծուածքով (50%, այսինքն 100 մաս ջրի մէջ լուծել 5 մաս կարբօլեան թթւուտ), կամ սուլեմայի լուծուածքով (1000 մաս ջրին 1 մաս սուլեմայ): Ունեորները պէտք է պոկեն պաստառը և նորը կպցնեն:

Եթէ պատերը պաստառուած չեն, այլ միայն սուաղած, այն ժամանակ դարձեալ պէտք է հացի միջուկով մաքրել, իսկ յետոյ կիր քսել:

Գիւղական տները պէտք է կրակարով ախտահանել:

—Ի՞նչ բան է կրակաթը:

Եթէ վերցնէք տաք կիր (անշէջ կամ անջուր) ու վրան ջուր լցնէք, կը տեսնէք որ կիրը տաքացաւ, գոլորչի տուեց, ֆշաց ու փշուեց, ցրիւ եկաւ: Եթէ էլի ջուր աւելացնէք (մի մաս կրի վրա 4 մաս ջուր լցնէք) ու խառնէք, կիրը կը բացուի ջրի մէջ ու կը դառնայ թանի նման հեղուկ: Այս է կրաջուրը կամ կրակարը:

Սենեակը կամ տունը ախտահանելու համար, պէտք է աւելով լաւ շաղ տալ կրա-

կաթը օճորքին ու պատերին, բայց ոչ թե-
ժեակի, այլ այնպէս, որ կիրը ամեն վրա,
ամեն ծակուծուկ լցուիւ իսկ յատակի վրա
ուզզակի պիտի ածուի կրաջուրը, այնպէս որ
ծածկէ գետինը:

Մի ուրիշ ձև էլ կայ:

Այս ծուխ-տալն է:

Դրա համար սենեակի մէջ այրում են
ծծումք (քուքուրթ), դռներն ու լուսամուտ-
ները պինդ փակում են, բոլոր ճեղքերը
կալնում, այնպէս որ ծուխը ոչ մի ծակից
դուրս չգայ:

Պէտք է մի հողէ ամանի վրա չաղացրած
ածուխ լցնել, կրակի վրա էլ ծծումք ու ա-
մանը դնել աւազի վրա, կամ ջրով լիքը
տաշտի մէջ:

Ծծումքի ծուխը շուտով լցնում է սե-
նեակը, մտնում է ամեն ծակուծուկ ու
սպանում մանրիկներին:

Լաւ կը լինի, որ այս միքանի միջոցները
—հացի միջուկով մաքրելը, ծուխ-տալն ու
կրաջրով լուանալը միասին կատարուեն. այն
ժամանակ աւելի հաստատաբար կ'ոչնչանան
բակտերիաները և ուրեմն տունը լաւ
կ'ախտահանուի:

բ. Հիւանդի սենեակի կամ-կարասիֆի
ախտահանումն.

Մենք ասացինք, որ սենեակի միջի ան-
կողինը, աթոռները և ամեն կարասիք պիտի
հէնց սենեակի մէջ թաց շորով կամ սպուն-
դով սրբել ու դուրս տանել բակը, կամ
պատշդամ:

Այստեղ արդէն պէտք է նորից որեւէ
ախտահանիչ խառնուրդով (կարբուեան
թթւուտ, կամ սուլեմայ) լաւ մաքրել: Իսկ
յետոյ նորից ներկել:

գ. Հիւանդի անկողնի ու սպիտակե-
ղէնի աղտահանումն.

Հիւանդի բոլոր փոխած սպիտակեղէնը,
ինչպէս ասել ենք, պիտի իսկոյն գցել ա-
ռանձին ամանի մէջ, որտեղ կարբուեան
թթւուտի կամ սուլեմայի խառնուրդ կայ:

Աղբատ կամ գիւղական հասարակու-
թիւնները, որ այս գեղերից չունեն, պէտք է
շբաջրի մէջ գցեն ու լաւ եփ տան այդ
սպիտակեղէնը:

Հիւանդութիւնից յետոյ նրա անկողինն
ու սպիտակեղէնը լաւ է որ այսուի, եթէ հիւ-
անդութիւնը խօլերա, ժանատախտ, քութէշ (սկարլատինա), դէֆթերիտ և կամ տիֆ է
եղել: Իսկ կարմրուկից, ջրծաղիկից, կապոյտ

հաղից, թոքախտից, ինֆլուէնցայից յետոյ, բաւական է ախտահանել նրանց ու արևի տակ պահել միքանի ժամ:

Մեր մէջ մի սարսափելի սովորութիւն կայ, այդ այն է որ մեռածի շորերը, նրա անկողինը, խաղալիքները աղքատներին են բաժանում, իբր թէ—բարերարութիւն են անում: Տանողը ի հարկէ ցաւն էլ հետն է տանում ու իր տունը գցում:

Թոնիցն էլ լաւ ախտանող միջոց է: Խորհուրդ կը տամ հիւանդի շորերը թրջել ու կախ տալ թոնրի մէջ մինչև որ լաւ չուրանան:

Թ.

Ի՞նչՊէս Պէտք է ԽնԱՄԵԼ ՀԻՒԱՆԴԻՆ

Հիւանդին լաւ խնամելը ահագին նշանակութիւն ունի. մէկ որ հիւանդը շուտ է լաւանում և շատ չի նուազում ու թուլանում: Երկրորդ, նրա շուտ առողջանալով կարելի է լինում շուտ էլ ոչնչացնել հիւանդաբեր բակտերիաները և փրկել ուրիշներին:

Ի՞նչպէս խնամել վարակուած հիւանդին:

Ի հարկէ անկարելի է այստեղ բոլոր հիւանդութիւնների մասին մի առ մի խօսել (մենք ամեն վարակիչ հիւանդութեան մասին առանձին գրքոյն կը հրատարակենք), այլ պէտք է այնպիսի խնամքի մասին խօսել, որին միշտ պէտք ունի հիւանդը, ինչ տեսակ էլ որ լինի հիւանդութիւնը:

Ամենից առաջ հիւանդին հարկաւոր է մաքուր օդ, լաւ սնունդ ու իստակութիւն:

ա. Մաքուր օդ. Հիւանդին պէտք է պառկացնել ամենամեծ ու ամենալոյս սենեակում, որտեղից աւելորդ կարասիք և զանազան իրեղէններ պէտք է դուրս տարուեն: Սենեակում պէտք է թողնել միայն հիւանդի անկողինը, մի սեղան, մի-երկու աթոռ և նրան խնամողի անկողինը—ուրիշ ոչինչ: Երբէք չպէտք է գորգեր, կարպետներ, վարագոյրներ թողնել այնտեղ:

Սենեակը պէտք է տաք լինի, բայց օրական միքանի անգամ պէտք է լուսամուտը բանալ, որ օդը մաքրուի: Եթէ դուրսը ցուրտ է, պէտք է բանալ հարևան սենեակի լուսամուտը, մինչեւ որ այնտեղի օդը նորոգուի, յետոյ միջի դուռն էլ բանալ, որ երկու սենեակի օդը խառնուեն իրար: Ի հարկէ

այդ երկրորդ սենեակումն էլ ոչ ոք չպիտի ապրի:

Մենք հէնց խօսում ենք հարուսաների մասին: Բայց ինչ արած, եթէ ամբողջ տունը հէնց մի սենեակից, կամ հացատնից է բաղկացած: Այս գէպքում, ինչպէս վերևն ասել ենք, անպատճառ կամ հիւանդին հիւանդանոց պէտք է տանել, կամ առողջներին հեռացնել—առանձնացնել:

Լուսամուտը բանալու ժամանակ ի հարկէ պէտք է լաւ ծածկել հիւանդին:

Մահճակալը պէտք է հասարակ լինի, երկաթից կամ փայտից: Անկողինը նոյնպէս հասարակ: Ամենից լաւ դօշակը դարմանէ դօշակն է. երբոր թացանում է կամ կեղտոտպում, միջի դարմանը պէտք է այրել և նորը լցնել: Դօշակի վրա պէտք է մի մաքուր չարսաւ փռել ու շուտ-շուտ փոխել: Ունեորները թնդ կլիօնկա (մուշամբա) դցեն դօշակի վրա: Վերմակը պիտի բարակ լինի, տակից սաւան քաշած, որպէսզի հէնց որ սաւանը կեղտոտպուի, իսկոյն փոխուի:

Երբէք չպէտք է շատ ծածկել հիւանդին: Առհասարակ պառաւ կանայք աշխատում են զոռով քրտնացնել հիւանդին, կարծերով թէ հէնց որ քրտնեց—կ'առող-

ջանայ: Դա վնաս է, երբոր ժամանակը համնի, քրտինքը ինքն իրան կը գայ: Ընդհակառակը, հիւանդին պիտի թեթև ծածկել, առանց այն էլ նրա մարմինը այրվում է, սկրտը նեղանում: Հիւանդի վրա միայն մի շապիկ պիտի քողնել, շորերով պառկացնելը շատ վնաս է, որովհետև հագուստը քրտնքից թաց լինելով, հօտում է. շապիկն էլ շուտ-շուտ պէտք է փոխել:

բ. Լաւ սեռնեդ.

Ուտելիքից ու խմելիքից շատ բան է կախուած. Վարակիչ հիւանդութիւնները ահագին տաքութիւն են բերում հիւանդին, ու զարմանալի կերպով թուլացնում և ուժապառ են անում նրան: Այս պատճառով հիւանդի կերած-խմածը պիտի սննդարար լինի: Միենոյն ժամանակ չպէտք է մոռանալ, որ այս հիւանդների մարտողութիւնը անկանոն է, թոյլ է. ուրեմն տուած կերակուրները պիտի դիւրամարս լինեն:

Ամնդից լաւ ուտելիքը կաթն է, մնայուրը և զանազան սուպեր: Թետոյ գալիս են. թերխաշ ձուն, ճուտի, հորթի և ուրիշ մաեր, միայն առանց ճարպի (ճրագուի): Խիզիլալա, գեղարքունի և մանր, ոչ-չաղ ձկներ կարելի է տալ: Խողի, սագի, հնդուհաւի և

բաղեկ միսը դժուարամարս է։ Հացը պէտք է խմոր չլինի, այլ լաւ թխուած։ Կարելի է կերակրել նոյնպէս խաշիներով (փափաներ)։ Միրդ կարելի է տալ միայն ջրում եփած, (կոմպոտ)։ Խմելու համար սառը ջուր—գինով կամ մի քիչ օղիով (կոնեակ, ռօմ), յետոյ թէյ, լիմոնով շարբաթ, հանքային ջրեր, օրինակ Բորժոմի ջուր, թթու ջրեր և այն։

Պէտք է կերակրել շուտ-շուտ և քիչ-քիչ, (մի անգամից շատ կերակուրը կը վը-նասի)։

Դ. Մայրութիւն.

Մենք քանի անգամ կրկնել ենք, թէ կեղտի մէջ է ապրում ու աճում բակաերիան։ Մենք դիտենք, որ հիւանդի վրայից վարակը ընկնում է սենեակի թողի ու կեղտերի մէջ ու զարգանում։

Ուրեմն հիւանդի սենեակը միշտ մաշուր պիտի լինի։ Յատակը միշտ թաց շորով պիտի սրբուի, ոչինչ չպէտք է թափ տրուի այնտեղ և այն։


Արտաթորութիւնների վրա պէտք է իսկոյն կիր լցնել ու դուրս տանել։

Սպիտակեղենի մասին մենք արդէն խօսել ենք։

Բժշկութեան մասին միքանի խորհուրդներ կը տանը մեր միւս գրքոյկներում, երբ առանձին-առանձին կը խօսենք ամեն մի վարակիչ հիւանդութեան մասին։

Վ Ե Բ Զ





ՀՀ Ազգային գրադարան



NL0285470

6712

